ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

ՀԱՎԱՏԻ ՄԱՍԻՆ

Հիսուս նրան ասաց. «Ո՛վ կին, հավատա՛ ինձ, որ կգա ժամանակը, երբ ո՛չ այս լեռան վրա և ո՛չ էլ Երուսաղեմում կերկրպագեն Հորը: Դուք երկրպագում եք նրան, ում չգիտեք, իսկ մենք երկրպագում ենք նրան, ում գիտենք, որովհետև փրկությունը հրեաներից է» (Հովհ. Դ 21-22):

Սիրելինե՛ր, ամենուր մեզ պետք է հավատ. հավատը մայրն է բոլոր բարիքների, այն բժշկություն է՝ փրկության հասնելու համար, առանց նրա անհնարին է բարձր վարդապետություններից որևէ բան սեփականել: Ինչպես ծովն առանց նավի անցնել փորձող մարդիկ, որքան էլ լավ լողորդ լինեն, շուտով կուլ են գնում ալիքներին, ճիշտ այդպես էլ նավաբեկության են ենթարկվում նրանք, ովքեր առաջնորդվում են միայն իրենց սեփական բանականությամբ: Ինչպես Պողոսն է ասում. «Ոմանք, հեռու վանելով հավատը, նավաբեկության ենթարկվեցին»: Որպեսզի մենք էլ նույնին չենթարկվենք, բռնենք այն սուրբ խարիսխից, որի մասին Հիսուս պատվիրեց սամարացի կնոջը: Երբ կինն ասաց. «Մեր հայրերը այս լեռան վրա երկրպագություն արեցին, իսկ դուք ասում եք, թե միայն Երուսաղեմն է այն տեղը, ուր արժան է երկրպագել», Հիսուս նրան պատասխանեց. «Ո՛վ կին, հավատա՛ ինձ, որ կգա ժամանակը, երբ ո՛չ այս լեռան վրա և ո՛չ էլ Երուսաղեմում կերկրպագեն Հորը»: Այստեղ Հիսուս այդ կնոջ առջև բացում է այն կարևոր վարդապետությունը, որը չէր ասել ո՛չ Նիկոդեմոսին, ո՛չ էլ Նաթանայելին: Կինը կամենում էր ցույց տալ իրենց ծեսերի գերազանցությունը հրեաների ծեսերի նկատմամբ և դա հաստատում իրենց հայրերի օրինակով, սակայն Քրիստոս չպատասխանեց նրա այդ հարցումին, քանի որ ժամանակը չէր, և ավելորդ էր այդ մասին խոսել և բացատրել, թե ինչու էին նրանց հայրերը երկրպագում այդ լեռան վրա, իսկ հրեաները՝ Երուսաղեմում: Եվ Նա լռեց այդ մասին: Բայց մերժելով թե՛ մեկ, թե՛ մյուս տեղի կարևորությունը՝ Նա բարձրացնում է կնոջ հոգին՝ ներշնչելով նրան, թե ո՛չ հրեաները և ո՛չ սամարացիները չունեն ավելի մեծ բան, քան այն, ինչ տրվելու է նրանց ապագայում, ապա միայն բացատրում է նրանց տարբերությունը: Սակայն սրա հետ մեկտեղ Նա նախապատվությունը տալիս է հրեաներին՝ ո՛չ թե մի տեղը նախապատիվ համարելով մյուսից, այլ առավելություն տալով հրեաների [աստվածպաշտության] հոգուն: Կարծես Հիսուս այսպես էր ասում. «Տեղի մասին հարկ չկա վիճելու, բայց աստվածպաշտությամբ հրեաներն առավել են սամարացիներից», քանի որ ասում է. «Դուք երկրպագում եք նրան, ում չգիտեք, իսկ մենք երկրպագում ենք նրան, ում գիտենք»: Իսկ ինչպե՞ս էին սամարացիները երկրպագում նրան, ում չգիտեին: Նրանք մտածում էին, թե Աստված սահմանափակված է որևէ տեղում, որևէ երկրում, և ըստ այս

պատկերացման էլ ծառայում էին Նրան։ Այդպես նրանք, պատվիրակություն ուղարկելով պարսիկների մոտ, ասել էին, թե այդտեղի աստվածը բարկանում է իրենց վրա։ Նրանք Աստծուն պատկերացնում էին կուռքերի նման։ Այդ պատճառով էլ շարունակում էին ծառայել դևերին և Աստծուն՝ իրար հետ շփոթելով այն, ինչը շփոթված չպետք է լիներ։ Իսկ հրեաները զերծ էին այդպիսի մոլորությունից. ճանաչում էին Աստծուն՝ իբրև տիեզերքի Աստված։ Այդ պատճառով էլ Քրիստոս ասում է. «Դուք երկրպագում եք նրան, ում չգիտեք, իսկ մենք երկրպագում ենք նրան, ում գիտենք»։ Մի՛ զարմանա, որ Քրիստոս Իրեն հրեա է համարում։ Նա խոսում է այդ կնոջ ընկալման մակարդակին համապատասխան՝ իբրև հրեա մարգարե։ Այդ պատճառով էլ ասում է. «Մենք երկրպագում ենք»։ Որ Երկրպագվողը հենց Ինքն է, այդ այժմ բոլորին է հայտնի. երկրպագելն արարածների գործն է, իսկ արարածների Աստծուն հատուկ է երկրպագությունն ընդունելը։ Քանի դեռ Նա խոսում է իբրև հրեա, ասում է «մենք», այսինքն՝ հրեաները։ Այդպիսով բարձրացնելով հրեական օրենքը՝ Նա վերստին Իր նկատմամբ վստահություն է առաջացնում և համոզում կնոջը՝ առավել ուշադիր լինել Իր խոսքի նկատմամբ, և բարձրացնում է հրեաների հավատը ոչ թե այն բանի համար, որ այն տեսակով եզակի է։ Նա, ով այդպես է արտահայտվում մի վայրի մասին, որով հրեաները ամենաշատն էին հպարտանում և որով իրենց գերազանց էին համարում բոլոր ազգերից, մարգարեական ճշմարտությամբ և զորությամբ ոչնչացնում է նրանց համար այդքան կարևոր գերազանցությունը : Այսպիսով, կնոջից վանելով նման մտքերը այն խոսքերով, թէ՝ «Ո՛վ կին, հավատա՛ ինձ, որ կգա ժամանակը, երբ ո՛չ այս լեռան վրա և ո՛չ էլ Երուսաղեմում կերկրպագեն Հորը», Քրիստոս ավելացնում է. «Որովհետև փրկությունը հրեաներից է»։ Այս խոսքերը ցույց են տալիս, որ հրեաներից շնորհներ եղան ամբողջ աշխարհին (այնտեղ սկիզբ առան աստվածճանաչողությունը, կուռքերի մերժումը և մյուս վարդապետությունները, նաև ձեր երկրպագությունը՝ չնայած ոչ ճիշտ, հրեաներից ունեցավ իր սկիզբը)։ Այսպիսով այս կամ էլ Իր աշխարհ գալը Նա փրկություն է անվանում, ավելի ճիշտ՝ չի մեղանչի նա, ով և՛ այս, և՛ մյուսը փրկություն կանվանի, որը, տերունական խոսքերով, «հրեաներից է»։ Այս ցույց տալով է Պողոսն ասում. «Նրանցից է նաև Քրիստոս՝ ըստ մարմնի, և Նա՛ է բոլորի վրա հավիտյանս օրհնյալ Աստված»։ Տեսնո՞ւմ ես՝ ինչպես է Քրիստոս գովաբանում Հին Ուխտը և ցույց տալիս, որ այդ Ուխտն արմատն է շնորհի, և որ Ինքը ոչնչով չի հակառակվում Օրենքին։ Չնայած Նա ասում է, որ բոլոր շնորհների սկիզբը հրեաներից է, «բայց կգա ժամանակ, և արդեն իսկ եկել է, երբ ճշմարիտ երկրպագուները կերկրպագեն Հորը հոգով և ճշմարտությամբ»։ Մենք, ասում է, ո՛վ կին, գերազանցում ենք ձեզ մեր երկրպագությամբ, բայց այն էլ ի վերջո կդադարի. կփոխվի ոչ միայն վայրը, այլ նաև Աստծուն ծառայելու կերպը. և այն արդեն իսկ մոտ է. «Կգա ժամանակը և արդեն իսկ եկել է»։

Եթե մարգարեները երկար ժամանակի համար էին մարգարեանում, ապա Քրիստոս այստեղ ասում է. «Արդեն իսկ եկել է»։ Մի՛ կարծիր, ասում է, թե այդ

կանխագուշակությունը կկատարվի միայն երկար ժամանակ անց։ Այդ իրադարձությունն արդեն սկսվում է. և շատ շուտով ճշմարիտ երկրպագուները Հորը կերկրպագեն հոգով և ճշմարտությամբ։ «Ճշմարիտ երկրպագուներ» բառերով Նա բացառում է և՛ հրեաներին, և՛ սամարացիներին։ Չնայած որ առաջիններն առավել են երկրորդներից, սակայն շատ ավելի պակաս են ապագա երկրպագուներից, այնչափ, որչափ ստվերը իրականից։ Այստեղ Նա Եկեղեցու մասին է ասում, որովհետև Եկեղեցուն է հատուկ ճշմարտապես և միայն Աստծուն արժանի պաշտամունքը։ «Քանի որ Հայրն էլ Իրեն այդպիսի երկրպագուներ է ուզում»։ Եվ եթե Նա հնուց ի վեր այդպիսիներին էր փնտրում, ապա թույլ տվեց երկրպագության հրեական կերպը ոչ թե այն պատճառով, որ Ինքն էր այդ ցանկանում, այլ Իր ողորմությամբ և որպեսզի հրեաներին բերի դեպի ճշմարտություն։ Ովքե՞ր են Նրա իրական երկրպագուները։

Նրանք, ովքեր աստվածպաշտությունը չեն սահմանափակում որևէ վայրում, այլ պաշտում են Նրան հոգով, ինչպես Պողոսն է ասում. «Աղաչո՛ւմ եմ ձեզ, եղբայրնե՛ր, ողորմությամբ Աստծո, որ պատրաստեք ձեր մարմինները որպես զոհ կենդանի, սուրբ, աստվածահաճո. ա՛յդ է ձեր բանական պաշտամունքը»։ Երբ Քրիստոս ասում է. «Հոգի է Աստված», դրանով ցույց է տալիս, որ Նա անմարմին է։ Իսկ անմարմինին վայելում է այդպիսի երկրպագություն, և պետք է մատուցվի այն, ինչ որ մեր մեջ անմարմին է, այսինքն՝ հոգով և մաքուր մտքով։ Այդ պատճառով էլ ասում է. «Նրա երկրպագուները պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն»։ Քանի որ ո՛չ սամարացիները, ո՛չ հրեաները հոգ չէին տանում հոգու մասին, այլ շատ մեծ հոգածություն էին ցուցաբերում մարմնի նկատմամբ՝ մաքրելով այն բոլոր հնարավոր կերպերով, այդ պատճառով էլ Նա ասում է, որ ոչ թե մարմնի մաքրությամբ, այլ նրանով, որ մեր մեջ անմարմին է, այսինքն՝ մտքով պետք է ծառայել Անմարմինին։ Այսպիսով, հարկ է ո՛չ թե ոչխար կամ զվարակներ, այլ ինքդ քեզ իբրև Աստծո ողջակեզ բերել. սա նշանակում է, որ ոչ թե պետք է ներկայանալ իբրև կենդանի զոհ, այլ որ պետք է ճշմարտությամբ երկրպագել։ Նախկին արարողությունները՝ թլփատությունը, ողջակեզները, զոհերը, խնկարկությունները, միայն ստվերն էին [և ոչ իրողությունների բուն կերպարանքը]. այժմ ամբողջը իրական է։ Այժմ ոչ թե պետք է թլփատել մարմինը, այլ նենգ մտքերը, խաչել սեփական անձը, մեռցնել ցանկությունները։ Կինը զարմացավ Նրա այդպիսի խոսքերից և որովհետև ի զորու չէր ըմբռնելու այդ վարդապետության վսեմությունը, լսի՛ր, թե ինչ է ասում. «Գիտեմ, որ Մեսիան՝ Քրիստոս կոչվածը, կգա. երբ Նա գա, մեզ ամեն ինչ կպատմի»։ Հիսուս նրան ասաց. «Այդ ես եմ, որ խոսում եմ քեզ հետ»։ Հապա ինչո՞ւ էին սամարացիները սպասում Քրիստոսին, երբ ընդունում էին միայն Մովսեսին։ Հենց Մովսեսի գրքերից։

Ամենասկզբից իսկ Նա հայտնում է Որդու մասին. «Մարդ ստեղծենք մեր պատկերով և մեր նմանությամբ»։ [«Ստեղծենք», «մեր»] հոգնակի թվով են դրված, որովհետև վերաբերում է [նաև] Որդուն։ Մամբրեի կաղնու մոտ

Աբրահամի հետ զրուցողը Որդին էր։ Հակոբը նույնպես Նրա մասին մարգարեացավ՝ ասելով. «Հուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից, մինչև որ գա նա, ում պատկանում են հանդերձյալները, Նրա՛ն են սպասում ժողովուրդները»։ Եվ ինքը՝ Մովսեսը, ասում է. «Քո եղբայրների միջից քո Տեր Աստվածը ինձ նման մարգարե պիտի մեջտեղ հանի, նրա՛ն կլսեք»։ Նմանապես օձի, Մովսեսի գավազանի, Իսահակի, գառան և բազում այլ օրինակներ կարող են Նրա ներկայության մասին ազդարարել բոլոր նրանց, ովքեր կամենում են հասկանալ այդ։ Կհարցնես, թե՝ ինչո՞ւ Քրիստոս այդ կնոջը ցույց չտվեց այս նախօրինակները, երբ Նիկոդեմոսին հիշեցրեց օձի, իսկ Նաթանայելին՝ Իր մասին մարգարեությունը, ինչո՞ւ այդ կնոջն այդ մասին ոչինչ չասաց։ Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով։ Որովհետև նրանք այրեր էին, որոնք զբաղվում էին այդ հարցերով, իսկ նա կին էր՝ խեղճ, անուս, Գրքերից անտեղյակ։ Եվ հետո Ինքը չէր էլ խոսում նրա հետ Գրքերից, այլ նրա ուշադրությունը Իր վրա հրավիրեց [հավիտենական] ջրի խոստումով և Իր ամենագիտությամբ՝ այսպիսով հիշեցնելով նրան Քրիստոսի մասին, ի վերջո բացահայտեց Իրեն։ Եթե Հիսուս սամարացի կնոջն այդ մասին ասեր ամենասկզբում, երբ նա դեռ չէր էլ հարցրել Իրեն, ապա այդ կնոջը կթվար, թե Հիսուս սին ու անիրականանալի խոսքեր է ասում։ Իսկ այժմ, սակավ առ սակավ նրան հիշեցնելով, ճիշտ ժամանակին էլ բացահայտում է Իրեն։ Հրեաներին, չնայած նրանք հաճախ ասում էին. «Մինչև ե՞րբ մեր հոգին պիտի հանես. եթե դու ես Քրիստոսը, համարձակ ասա՛ մեզ», Նա հստակ պատասխան չտվեց, իսկ սամարացի կնոջը Իր մասին ուղղակի ասաց, որ Ինքն է Քրիստոսը։ Եվ այս այն պատճառով, որ այդ կինն ավելի բարեմիտ էր, քան հրեաները. որոնք չէին հարցնում՝ Նրանից սովորելու համար, այլ որպեսզի մշտապես ծաղրեն Նրան։ Իսկ եթե նրանք կամենային սովորել, ապա դրա համար բավական կլիներ Նրա հետ խոսելը, նաև Գրքերը և Նրա հրաշագործությունները։ Բայց կինը ի՛նչ որ ասում էր, ասում էր սրտի խորքից, մաքուր մտադրությամբ, և այդ երևում է նրա հաջորդ գործողություններից։ Նա և՛ ինքը լսեց Նրան և հավատաց, և՛ ուրիշներին հրավիրեց հավատալու. բոլորի համար տեսանելի են այդ կնոջ ջանքերն ու հավատը։ «Եվ այդ խոսքի վրա եկան նրա աշակերտները»։ Ճիշտ ժամանակին եկան նրանք, քանի որ Հիսուս ավարտեց Իր խոսքը։ «Եվ զարմանում էին, որ նա խոսում էր այդ կնոջ հետ, բայց նրանցից ոչ ոք չասաց, թե՝ ի՞նչ ես ուզում կամ ի՞նչ ես խոսում նրա հետ»։ Ինչո՞ւ նրանք զարմացան։ Նրա հեզության և խոնարհության վրա, այն բանի վրա, որ Նա, լինելով այդքան մեծ, իրեն թույլ տվեց այդպիսի խոնարհությամբ զրուցել աղքատ, մանավանդ սամարացի կնոջ հետ։ Եվ չնայած զարմացած էին, սակայն չհարցրին զրույցի պատճառը։ Այդպես նրանք սովորեցին կատարել աշակերտի իրենց պարտականությունները, այդպես նրանք Նրա երկյուղով ու Նրա հանդեպ հարգանքով լցվեցին։ Չնայած Նրա մասին պատշաճ պատկերացում չունեին, սակայն նայեցին Նրան՝ իբրև հրաշալի մարդու, և Նրա նկատմամբ մեծ հարգանք տածեցին։ Ճիշտ է՝ շատ դեպքերում նրանք

դրսևորում էին մեծ համարձակություն, ինչպես, օրինակ, Հովհաննեսը Նրա գիրկն ընկավ, կամ աշակերտները, մոտենալով Նրան, հարցրին. «Մեզնից ո՞վ է մեծ երկնքի արքայության մեջ», իսկ Զեբեդեոսի որդիները խնդրեցին Նրան, որ իրենցից մեկը Նրա աջ, մյուսը Նրա ձախ կողմում նստի: Ինչո՞ւ այժմ նրանք չհարցրին Նրան: Որովհետև այն բոլոր մյուս դեպքերը վերաբերում էին իրենց, և այդ պատճառով էլ նրանք կարիք ունեին հարցնելու, բայց այժմյան իրադրությունը ոչնչով չէր վերաբերում իրենց: Հովհաննեսը, որը Նրա գիրկն ընկավ, շատ ժամանակ անց, երբ Նրա հետ առանձնակի մտերմությունից էր օգտվում և միանգամայն համոզված էր, որ Քրիստոս իրեն սիրում է, ինչպես ասվում է՝ նա այն աշակերտն էր, ում սիրում էր Հիսուս: Իսկ ի՜նչը կարող է համեմատվել այսպիսի երանության հետ: Բայց մենք, սիրելինե՛ր, չսահմանափակվենք միայն առաքյալին երանելով, այլ անենք այնպես, որպեսզի մենք էլ երանելիների թվում լինենք. նմանվենք ավետարանչին և դրա համար տեսնենք, թե ինչպես նա ձեռք բերեց այդքան մեծ սեր: Ինչո՞վ: Նա թողեց հորը, նավակը, ուռկանը և հետևեց Քրիստոսին: Այդպես վարվեցին և՛ ինքը, և՛ իր եղբայրը, և՛ Պետրոսը, և՛ Անդրեասը, և՛ մյուս առաքյալները: Հատուկ ի՞նչ կատարվեց, որից բխեց Քրիստոսի մեծ սերը: Ինքը՝ ավետարանիչը, իր մասին ոչինչ այդպիսի բան չի ասում, բացի նրանից, որ իրեն Փրկիչը սիրում է, սակայն այն առաքինությունների մասին, որոնց համար սիրելի էր դարձել ինքը, համեստորեն լռում է: Որ Քրիստոս սիրում էր նրան մի հատուկ սիրով, այդ բոլորին էր հայտնի. սակայն երբեք չենք տեսնում, որ նա մյուսներից առանձին խոսի Քրիստոսի հետ կամ Նրան ինչ-որ բան հարցնի, ինչպես այդ հաճախ անում էին Պետրոսը, Փիլիպպոսը, Հուդան և Թովմասը. միայն այն ժամանակ ենք այդ տեսնում, երբ Հովհաննեսն ուզում էր գոհացնել իր աշակերտակցին և հնազանդվեց նրան: Երբ առաքյալների գլուխը նրան ակնարկ արեց, այնժամ էլ նա հարցրեց Հիսուսին, քանի որ բոլոր առաքյալները մեծ սեր էին տածում իրար նկատմամբ: Այսպիսով տեսնում ենք, որ նրանք միասին և՛ տաճար էին գնում, և՛ միասին խոսում էին ժողովրդի հետ: Ճիշտ է, Պետրոսը միշտ մեծ ջերմեռանդությամբ է և՛ խոսում, և՛ գործում, իսկ վերջում Հիսուսից լսում. «Սիրո՞ւմ ես ինձ ավելի, քան դրանք»: Իսկ բոլորից շատ սիրողը անշուշտ ինքն էլ սիրված էր: Բայց այս ակնհայտորեն բխում էր Հիսուսի նկատմամբ սիրուց, նաև Իր՝ Հիսուսի սիրուց: Ուրեմն, ի՞նչն էր մղում Հովհաննեսին ավելի սիրելու: Ինձ թվում է՝ այն, որ այս այրը ամենահեզն ու ամենախոնարհն էր, որովհետև նա երբեք իրեն ուրիշներից չէր գերադասում: Եվ թե որքան մեծ է այդ առաքինությունը, հայտնի է Մովսեսի օրինակից, որին հենց այդ առաքինությունն էլ դարձրեց այդքան մեծ ու փառավոր:

Ոչ մի բան համեմատելի չէ խոնարհության հետ: Այդ պատճառով էլ Քրիստոս հենց դրանից էլ սկսեց երանիների ուսուցումը՝ մտադրվելով ասես հսկայական կառույցի հիմք դնել, Նա ամենից առաջ դրեց խոնարհությունը: Առանց դրա անհնարի՛ն է, անհնարի՛ն է փրկվել. մարդը որքան էլ շատ աղոթի, պահք պահի, ողորմություն տա, բայց այդ անի հպարտությամբ և չունենա

խոնարհություն, այդ ամենը զազրելի է։ Բայց եթե այդ ամենն արվում է խոնարհությամբ, ուրեմն փափագելի է, դրվատելի, գովելի։ Ուրեմն խոնարհեցնենք մեզ, սիրելինե՛ր, խոնարհեցնենք, և եթե միշտ արթուն լինենք, այդ առաքինությունը մեզ համար շատ հեշտ կլինի։ Իրականում ի՞նչն է քեզ մղում հպարտանալու, ո՛վ մարդ, մի՞թե դու չես տեսնում քո ոչնչությունը, քո կամքի հակվածությունը դեպի չարը։ Մտածի՛ր վախճանիդ օրվա մասին, հիշի՛ր մեղքերիդ բազմությունները։ Հնարավոր է, որ շատ մեծ գործեր ես արել, այդ պատճառով էլ մտածում ես, թե մեծ մեկն ես։ Բայց դրանով իսկ կորցնում ես ամեն բան։ Ոչ այնքան մեղավորին, որքան առաքինի մարդուն է անհրաժեշտ հոգ տանել խոնարհ լինելու մասին։ Ինչո՞ւ է այդպես։ Որովհետև մեղավորը կարիք ունի իր խղճմտանքի հետ հաշտության, իսկ առաքինի մարդը, եթե չի հսկում իրեն, ասես քամու միջոցով վեր բարձրացած, նույն պահին էլ ընկնում է՝ նման հայտնի փարիսեցուն։ Դու օգնում ես աղքատներին, բայց տալիս ես նրանց ոչ ամեն ինչ, իսկ Աստված մեկն է Իր՝ բոլոր քեզ նման ծառաների համար։ Այդ պատճառով էլ մերձավորի թշվառության մեջ տեսնելով քո սեփական թշվառությունը և ուրիշների մեջ տեսնելով քո բնությունը՝ հարկ է առավել խոնարհվել։ Հնարավոր է՝ մեր նախնիներն էլ են այդպիսին եղել, իսկ եթե մենք ձեռք ենք բերել հարստություն, ապա այն կրկին կարող ենք կորցնել։ Ի՞նչ է հարստությունը. ունայն ստվեր, ծուխ, որ ցնդում է, խոտի ծաղիկ, կամ, ավելի ճիշտ կլինի ասել, ոչնչի ծաղիկ։ Ի՜նչ ես հպարտանում խոտով։ Մի՞թե հարստացողները նրանք չեն, որոնք գող են, շնացող, սանձարձակ, գերեզմաններ թալանող։ Կամ էլ քեզ հպարտացնում է այն, որ այդպիսի ընկերակիցնե՞ր ունես կամ էլ սիրում ես պատի՞վը։ Բայց պատվի [արժանանալու] համար ողորմությունից ավելի ի՞նչ միջոց կա. հարստությամբ և իշխանությամբ ձեռք բերված պատիվը ատելի է ուրիշների համար, իսկ ողորմածներին պատիվ ցույց է տրվում բարյացակամորեն։ Եվ եթե մարդիկ են այդպիսի պատիվ ցույց տալիս ողորմածներին և նրանց ամենայն բարիք ցանկանում, ապա ուրեմն մտածի՛ր, թե ինչպիսի պարգևներ կստանան նրանք մարդասեր Աստծո կողմից։

Փնտրե՛նք այնպիսի հարստություն, որը հավիտենական է, որը երբեք չի կորչում, որպեսզի այստեղ մեծ լինելով և այնտեղ փառավորվելով՝ արժանանանք հավիտենական բարիքներին ու պարգևներին մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարդասիրությամբ, որին Հոր և Սուրբ Հոգու հետ վայել է փառք այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։

Աշխարհաբարի վերածեց Մարթա ԱՐԱԲՅԱՆԸ